ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Տեղակայված լինելով Ալպիմալայան սեյսմիկ գոտում՝ Հայաստանը պատմականորեն հակված է եղել երկրաշարժերի: 1988թ-ի վերջին ավերիչ երկրաշարժն ավերեց Սպիտակը՝ հանդիսանալով 25,000 մարդու մահվան և 19,000 մարդու մարմնական վնասվածքների պատճառ, լրջորեն ավերելով 517,000 բնակարան և երկրի հյուսիսային մասերին պատճառելով ԱՄՆ 15-20 միլիարդ դոլարի տնտեսական վնաս: Երկրում հեղեղումները նույնպես լուրջ վնաս են հասցնում: Օրինակ, 2010թ-ի հեղեղման արդյունքում ԱՄՆ 10 մլն դոլարի վնաս հասցվեց: Այնուամենայնիվ, բնական աղետների այս ցանկն ամբողջական չէ, Հայաստանի առջև ծառացած են նաև այլ վտանգներ, ինչպես օրինակ՝ երաշտը, կարկտահարությունը և սողանքները: ՀՀ կառավարությունն ընդունել է աղետների ռիսկի կառավարման կարևորությունը՝ ընդգծելով, որ բնական աղետները վտանգում են երկրի զարգացումը: Այս առումով Համաշխարհային Բանկի խումբն առաջարկում է աջակցել երկրում աղետների դիմակայունության բարձրացմանը՝ մեկնարկելով *Աղետների ռիսկի կառավարման ազգային ծրագիրը:*

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ: **Ֆինանսավորում՝** ԱՄՆ 1.75 մլն դոլար **Տևողություն՝** 2.5 տարի՝ սկսած 2015թ-ից:

Հիմնական գործընկերներ՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, համապատասխան պետական մարմիններ, Երևանի քաղաքապետարան և ՀՀ այլ մարզեր ու համայնքներ:

Աղետների ռիսկի կառավարման ազգային ծրագրի նպատակն է ավելի զարգացնել աղետների ռիսկին դիմակայունությունը՝ (1) բարելավելով աղետների ռիսկի տեղեկատվությունը, (2) խթանելով աղետների ռիսկի նվազեցումը, (3) ուժեղացնելով աղետներին պատրաստվածությունը և (4) բարելավելով աղետների ֆիսկալ ռիսկերի և ռիսկի ֆինանսավորման տարբերակների ընկալումը:

GFDRR Global Facility for Disaster Reduction and Recovery

WORLD BANK GROUP

ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ծրագիրն իրականացնելու նպատակով Համաշխարհային Բանկի թիմը սերտորեն կհամագործակցի համապատասխան նախարարությունների հետ՝ հինգ բաղադրիչների, այն է՝ ինստիտուցիոնալ ուժեղացման, ռիսկի որոշման, ռիսկի նվազեցման, աղետներին պատրաստվածության և ֆինանսական պաշտպանության իրականացման նպատակով:

Ինստիտուցիոնալ ուժեղացում

Արդյունավետ համագործակցություն ՀՀ-ում պետական գերատեսչությունների շրջանում, որը հույժ կարևոր է աղետների ռիսկի նվազեցման ջանքերի հաջողության ապահովման տեսակետից: Ծրագիրը կաջակցի, որպեսզի Աղետների ռիսկի նվազեցման Հայաստանի Ազգային ռազմավարությունը համապատասխանեցվի 2015թ-ի մարտին ընդունված Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի շրջանակին, ինչպես նաև Կայուն զարգացման ՄԱԿ-ի նպատակներին: Համապատասխան շահագրգիռ խմբերի և գործընկերների հետ սեմինար-քննարկումների և հանդիպումների միջոցով Ծրագրի շրջանակներում նաև կմշակվի վերջինիս իրականացման պլանը:

Ռիսկի որոշում

Աղետների ռիսկի կառավարմանն ուղղված առաջին քայլը հանդիսանում է վտանգի և խոցելիության ընկալումը: Ռիսկերի գնահատումը և քանակական վերլուծությունը և բնական աղետների պոտենցիալ ազդեցութ-յունների նախատեսումը կարող է օգնել կառավարություններին՝ տեղեկացված որոշումներ կայացնել և ավելի լավ պատրաստված լինել: Ծրագիրը կօգնի հավաքագրել աղետների ռիսկի վերաբերյալ առկա տեղեկատվությունը և բարելավել աղետների ռիսկի վերաբերյալ գեոտարածական տեղեկատվության համար բաց պլատֆորմը, որը համատեղ կօգտագործվի տարբեր նախարարությունների, պետական գերատեսչությունների և այլոց կողմից: Ի լրումն դրան՝ Ծրագիրը կօժանդակի ազգային սեյսմիկ վտանգի գնահատմանը և սեյսմիկ շրջանացման նոր քարտեզի մշակմանը, որը տեղեկատվություն կտարամդրի առ այն, թե շինարարական նորմերում ինչ պոտենցիալ փոփոխություններ են անհրաժեշտ:

Ռիսկի նվազեցում

Աղետների ռիսկի վերաբերյալ տեղեկատվությունը կարող է ծառայել զարգացման տարբեր ռազմավարությունների, պլանների և ծրագրերի համար, որոնք կարող են նվազեցնել ռիսկերը: Սա կարող է իրականացվել առաջանցիկ գործողութ-յունների իրականացման միջոցով՝ նպատակ ունենալով խուսափել նոր ռիսկերի առաջացումից, օրինակ՝ հաշվի առնելով աղետների ռիսկերը քաղաքաշինական գլխավոր հատակագծերում և բարելավելով շինարարական պրակտիկաները և առկա ռիսկերի վերացման նպատակով ներդրումներ իրականացնելու, ինչպես օրինակ՝ հույժ կարևոր ենթակառուցվածքների ուժեղացման միջոցով: Հայաստանի շինարարական նորմերն ընդունվել են 1994թ-ին, և շատ կարևոր է քննության առնել դրանք՝ ելնելով սեյսմիկ վտանգի մասին տեղեկատվությունից: Քաղաքային իշխանությունները կշահեն Ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցությունից՝ աղետների ռիսկի հետ կապված տեղեկատվությունն իրենց զարգացման պլաններում ներառելու արդյունքում:

Ծրագիրը նաև կաջակցի Անվտանգ դպրոցաշինության ազգային ծրագրի իրականացմանը, որի նպատակն է դպրոցներն ավելի դիմակայուն դարձնել բնական միջավայրի հակառակ ազդեցության նկատմամբ, ինչպես նաև այլ երկրների հետ դպրոցների անվտանգության թեմայով գիտելիքների փոխանակման խթանմանը:

Աղետներին պատրաստվածություն

Պատշաճ կերպով պատրաստված լինելը կարևոր է, քանի որ ռիսկերը չեն կարող ամբողջությամբ վերացվել կամ նվազեցվել:

Հայաստանում բարելավվում է արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և վերջիններիս արձագանքման կարողությունը ազգային մակարդակով: Տեղական մակարդակում լրացուցիչ բարելավումները կարող են էլ ավելի օգնել՝ կենսապահովման պայմանները պաշտպանելու, ինչպես նաև աղետներից վերականգնումն արագացնելու իմաստով: Այլ երկրներում, ինչպես օրինակ՝ Թուրքիայում և Ղրղզստանի Հանրապետությունում ունեցած Համաշխարհային Բանկի փորձը կօգնի այս ուղղությամբ բարելավումներ արձանագրել:

Ֆինանսական պաշտպանություն

Ֆինանսական պաշտպանության նպատակն է ավելացնել ֆինանսական կարողությունները և պատրաստվածությունը՝ պահպանելով ֆիսկալ հաշվեկշիռը՝ նպատակ ունենալով աջակցել Կառավարության, բիզնեսների և տնային տնտեսությունների վրա աղետների հետևանքով առաջացող տնտեսական բեռի նվազեցմանը:

Ծրագիրը կառավարությանը կօգնի ավելի լավ հասկանալ աղետների ֆիսկալ ազդեցությունները՝ գնահատում իրականացնելու միջոցով և կառավարությանը վերլուծություն և աղետների ռիսկի ֆինանսավորման և ապահովագրության նպատակով քաղաքականության այլընտրանքային տարբերակներ կտրամադրի՝ կիրառելով աշխարհի լավագույն փորձը:

ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

Ծրագրի իրականացումը հնարավոր է դարձել *Ճապոնիայի և Համաշխարհային Բանկի «Զարգացող երկրներում աղետների ռիսկի կառավարման ուղղորդման ծրագրի»* (Աղետների նվազեցման և վերականգնման գլոբալ գործիքի (GFDRR) միջոցով) *և այլ դոնորների աջակցության շնորհիվ:* Վերջինիս շրջանակներում նաև սերտ համագործակցություն կլինի զարգացման այլ գործընկերների, ինչպես օրինակ՝ Հայաստանում գործող ՄԱԿ-ի գործակալությունների, Միջազգային ֆինանսական կազմակերպությունների, երկկողմ գործակալությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ:

Թիմի ղեկավար
Կո Տակեուչի, Աղետների ռիսկի կառավարման մասնագետ

Կոնտակտային անձ՝
Նոռա Միրզոյան
Համաշխարհային Բանկի Հայաստանի գրասենյակ